

«Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----- 2021 թ. № ----- Ն

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Հավելված

ՀՀ կառավարության

2021 թվականի _____

N _____ Ն որոշման

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉ

1. Ընդհանուր դրույթներ

1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) հանրակրթության պետական կրթական չափորոշիչ բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որի հիմքում կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:
2. Չափորոշիչը սահմանում է ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, նախադպրոցական տարիքի երեխաներին ներկայացվող որակական պահանջները (կարողունակություններ (կոմպետենցիաներ), կրթության և զարգացման վերջնարդյունքները (ըստ տարիքային խմբերի), նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությանը ներկայացվող պատանջները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը, նախադպրոցական ուսումնական հաստատություններում զարգացման միջավայրի չափանիշները:
3. Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:
4. Չափորոշիչի հիման վրա մշակված նախադպրոցական կրթական ծրագրերի ներդրումը պարտադիր է նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատությունների համար՝ անկախ կազմակերպարավական ձևից:
5. Ըստ չափորոշիչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

1. Նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները

6. Կարողունակությունները անձի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման տարբեր ձևերի միջոցով:
7. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան:

Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

8. Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

• **Լեզվական և հաղորդակցական կարողունակություն**

Երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր կերպով ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Տեխնիկական միջոցների օգնությամբ կարողանում է հաղորդակցվել և արտահայտել ցանկությունները:

• **Ճանաչողական և մտիվացիոն կարողունակություն**

Երեխան ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների թաքնված կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով/ակտիվ ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ:

• **Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն**

Երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան պատկերացում ունի սեփական հնարավորությունների մասին, ձևավորվում է վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրունություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ընդունակ է ճանաչել սեփական և այլոց հույզերը. ձևավորվում են հույզերի կառավարման հմտությունները: Ունակ է ճանաչել մեծահասակների և հասակակիցների հետ փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու ունակություններ:

• **Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն**

Նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները /դրոշ, զինանշան, օրհներգ/, դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին:

• **Թվային և մեդիա կարողունակություն**

Երեխան պատկերացնում է մեդիայի դերը հասարակական կյանքում,

կողմնորոշվում մեդիայի բազմազանության մեջ, ընտրում և գնահատում անհրաժեշտ տեղեկատվությունը՝ ցուցաբերելով որոշակի վերաբերմունք դրա նկատմամբ: Տիրապետում է մեդիագրագիտության և անվտանգության հիմնական կանոններին՝ հասկանալով դրանց հետ կապված վտանգները: Երեխան ունի առարկաները, երևույթները մոդելավորելու և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները: Կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից:

- **Մշակութային կարողունակություն**

Երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է արվեստի միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները:

- **Մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն**

Երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի: Կարողանում է առարկաները տարբերակել ըստ նյութի:

- **Տնտեսական կարողունակություն**

Երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Գիտի տաբեր մասնագիտությունների անվանումներ և դրանց առանձնահատկությունները: Ցուցաբերում է տնտեսական պարզ հասկացությունների իմացություն, գիտի իր հետ առնչվող առարկաների ձեռքբերման եղանակները, կիրառում է տնտեսական պարզ բառապաշար: Երեխան հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Ունի տարրական պատկերացումներ շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ: Կարողանում է նկարագրել մարդու և տնտեսության ազդեցությունը բնության վրա: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում:

- **Ֆիզիկական կրթության և առողջ ապրելակերպի կարողունակություններ**

Երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոններին՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, առողջ սննդի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, գույքի, սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին:

Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները:

Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով:

Վարժությունների կատարման ընթացքում, թիմային խաղերում դրսևորում է կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնություն:

9. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքներ

- Շարժողական ոլորտ՝

ա) Վաղ մանկության տարիքի առաջին խումբ (մինչև 1 տարեկան)՝

- Երեխան կարողանում է սողալ, մագլցել, կքանստել և կանգնել, բարձրանալ ոչ բարձր առարկաների վրա (արկղ) և իջնել դրանց վրայից, անցնել գերանի վրայով.
- կարողանում է առանց հենվելու և բռնվելու որևէ առարկայից նստել.
- կանգնած դրությամբ թեքվել և ուղղվել առանց ոտքերը 2